## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
## «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

07-ը դեկտեմբերի 2022թ.
ժամը 15⁰⁰

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ԶՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության պետ գնդապետ Ս. Մազմանյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Վարդանյան,
Բացակայում է՝ ՀՀ ԶՈՒ ԹՎ հրդեհային անվտանգության ծառայության ավագ սպա, մայոր Հ. Մանուկյանը:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ Գ. Տերյան:

***« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.***

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 2 | «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 3 | «Ալեոտո» ՍՊԸ |
| 4 | «Ֆաեռ Գրուպ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1-ի առաջին կետում նշված է մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ մասնակցի հավաստումը, այնինչ վերոնշյալ ընթացակարգի հրավերի Հավելված N 1-ի առաջին կետում նշվում է մասնակցի և իրեն փոխկապակցված անձանց մասնակցության իրավունքի պահանջներին բավարարման վերաբերյալ հավաստումը: «ԺՈԶԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ կողմից 11-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում «հրշեջ ճնշման փողրակի» տեսակը տարբերվում է հրավերով նախատեսվածից և հիմք ընդունելով հայտը նախագծող անձի մասնագիտական եզրակացությունը գնահատող հանձնաժողովը այն համարեց հրավերի պահանջներին համապատասխան: «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «ПО-6РТС(6%) ՏՈՒ-20.41.20-001-60130677-2021», իսկ վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսված է «ПО-6ТСН (6%) ՏՊ-20.41.20-001-31459904-2019»: Քանի որ մասնակիցը ներկայացրել է ընթացակարգի հրավերով նախատեսվածից տարբերվող ՏՊ (ստանդարտ) անհրաժեշտ է հրավերի պահանջին համապատասխան ներկայացնել նաև դրա կրկնօրինակը, 12-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում հանդերձանքի բրեզենտի ներծծված նյութերը հրավերով նախատեսվածից բացի նշված է լրացուցիչ арт. 11293 ОП, որը հրավերով նախատեսված չէ և ընդունելի չէ: Անհրաժեշտ է նշել միայն հրավերով նախատեսված արտիկուլի նյութերը:
Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 07.12.2022թ. ծանուցել

վերոնշյալ մասնակիցներին սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

«Ֆաեռ Գրուպ» ՍՊԸ կողմից հայտով ներկայացված փաստաթղթերում նաև Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, նշված են «Ֆաեռ Գրուպ» ՍՊԸ և «Ֆաեռ» ՍՊԸ միաժամանակ, որը շտկման ենթակա չէ և գնահատող հանձնաժողովի համար անհասկանալի է, թե որ կազմակերպություն է մասնակցել ընթացակարգին, Հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում նշված է «Ֆաեռ» ՍՊԸ, փաստաթղթերը ստորագրվել են լիազորված անձի կողմից, ում լիազորել է «Ֆաեռ Գրուպ» ՍՊԸ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը: Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը մերժել է այդ մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 3 մասնակից.

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Նախահաշվ. Գումարը | Ընտրված կազմակերպության | | | Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | գինը | | անվանումները | գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | Հրդեհի մարման փրփուր կամ համանման միացություններ /Փրփրահեղուկ/ | լ | 4000 | 2316000 | | | | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 4000000 | 4800000 |
| 2 | Կրակմարիչներ /Կրակմարիչ Մոդուլ ՄՊՊ-7/ | հատ | 200 | 3960000 | «Ալեռտո» ՍՊԸ | 3295000 | 3954000 | | | |
| 3 | Կրակմարիչներ /Կրակմարիչ Ինքնաշխատ ԿՓ-8(գ)/ | հատ | 200 | 5358000 | «Ալեռտո» ՍՊԸ | 4460000 | 5352000 | | | |
| 4 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԿՓ-25/ | հատ | 100 | 2880000 | «Ալեռտո» ՍՊԸ | 2397500 | 2877000 | | | |
| 5 | Ցուցափեղկեր (պահարաններ) /Մետաղյա փեղկերով հրշեջ վահանակ/ | հատ | 100 | 12840000 | | | | | | |
| 6 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԿՓ-2/ | հատ | 1500 | 3359250 | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 5750000 | 6900000 |
| 7 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԱԿ-2/ | հատ | 600 | 3834000 | «Ալեռտո» ՍՊԸ | 3195000 | 3834000 | | | |
| 8 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԱԿ-5/ | հատ | 100 | 1259000 | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 1500000 | 1800000 |
| 9 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԿՓ-5/ | հատ | 200 | 897800 | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 1000000 | 1200000 |
| 10 | Կրակմարիչներ /Կրակմարիչներ ԿՓ-8/ | հատ | 200 | 1158000 | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 1575000 | 1890000 |
| 11 | Ռետինափողրակներ /Ռետինափողրակ 51մմ (հրշեջ մեքենաների համար)/ | մ | 1000 | 619500 | | | | «Ալեռտո» ՍՊԸ | 1000000 | 1200000 |
| | | | | | | | | «ԺՈՋԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 2000000 | |
| 12 | Հրշեջ խմբի համազգեստներ /Հրշեջի մարտական հանդերձանք/ | հատ | 100 | 11490000 | | | | «ԺՈՋԵՖ ԿՈՄԵՐՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 17000000 | |
| | | | | | | | | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ | 15000000 | 18000000 |

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 5-րդ չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 1-ին, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, և 12-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 13.12.2022թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 2-րդ, 3-րդ 4-րդ և 7-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «Ալեռտո» ՍՊԸ և վերջինիս անգործության ժամկետի ավարտից հետո, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ**

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Ս. Մազմանյան

**Գնահատող** Ա. Վարդանյան

**Գնումները համակարգող՝** Գ. Տերյան